3· – Երբորդ նորութիւնը, զոր կը գտնենք Արճիշեցիի քով յայտնապէս, ամէնօրեայ պատարագի պատճառներու ներկայացումն է· այդ պատճառներէն մէկն է այն՝ որ ամէն օր ննջեցեալ կայ· հետեւաբար, ամէն օր պէտք է պատարագ մատուցանել· քանի որ սուրբ Պատարագը կենդանեաց եւ ննջեցելոց համար է: Ասիկա պարզ ու բնական պատճառաբանութիւն մըն է, որ սակայն լիովին կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ ըմբռնումը ԺԳ. դարուն:

4· – Արճիշեցի կը պայքարի նաեւ – թէեւ շատ աւելի մեղմ չեշտով քան Լամբրոնացին, եւ ասիկա ցոյց կու տայ թէ ժողովրդական թիւր ըմբռնումները հետզհետէ նուազած էին – անոնց դէմ՝ որ կը կարծէին նուիրատուութեամբ գնել սուրբ Պատարագը եւ մէկ ննջեցեալի յատկացնել: Ատիկա անկարելի է, ըստ Արճիշեցիի· որովհետեւ սուրբ Պատարագը, թէեւ մէկ ննջեցեալի համար կընայ մատուցուիլ, բայց միաժամանակ համայն աշխարհի կարիքներուն համար աղերսներով լի է: Ասով հանդերձ, սակայն, նուիրատուն լիով կը հասնի իր նպատակին, կը ստանայ իր հայցուածքը· մանաւանդ թէ՝ բոլոր աշխարհի վրայ մատուցուած սուրբ Պատարագներէն բաժին կ'ելլէ անոր, ըստ իր հաւատքին եւ հոգեկան տրամադրութիւններուն:

5· – Հուսկ Արճիշեցի կը զանազանէ նաեւ ննջեցեալներու երկու դասակարգ, անզեղջ եւ զղջացեալ քրիստոնեաներու· այս վերջինները, եթէ նոյնիսկ բոլոր կեանքով մեղքի մէջ ապրած ըլլան, բայց գոնէ վերջին վայրկեանին զղջացած, կրնան օգտուիլ սուրբ Պատարագի տիեզերական արդիւնքներէն: Այս կէտին մէջ նոյնը կ'աւանդէ ինչ որ կ'աւանդէին «Յաճախապատում»ի հեղինակէն սկսեալ բոլոր միւսները, որոնց ծանօթ ենք արդէն:

Հիմա մեղի կը մնայ հարց տալ թէ ի՞նչպէս Ամենապատիւ Պատրիարք Խաչատուրեան համարձակած է հեղինակօրէն այսքան բացայայտ ճշմարտութեան մը մասին անճիշտ դաղափարներ յայտնել եւ նոյնիսկ ծիսական կարգադրութիւններ կատարել: Երբեք չենք կրնար խորհիլ որ Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը տեղեակ չըլլայ Արճիշեցիի գրութիւններուն: Բայց ինչ որ իրականութիւն է, այն է՝ թէ Գարեգին Պատրիարքի պատգամները բոլորովին հակոտնեայ են Արճիշեցիի աւանդութեան:

Աւելի զարմանալին այն է, ինչ որ ժամանակին Փառէն Սրբազան եւս կը յայտարարէր՝ իբր թէ Հայոց քով ննջեցեալներու ի նպաստ պատարագ մատուցանելու սովորութիւնը նորամուտ է, եւ օտար ազդեցութիւններու արդիւնք է[14]. Փառէն Սրբազան շատ լաւ ծանօթ էր Արճիշեցիի գրութիւններուն, որովհետեւ բաղդատական ուսումնասիրութեան փորձեր ալ կատարած է Լամբրոնացիի եւ Արճիշեցիի Պատարագամատոյցներուն միջեւ[15]: Արդ, մենք տեսանք որ Արճիշեցիի համաձայն, ննջեցեալներու հոգւոյն ի նպաստ պատարագ մատուցանելու սովորութիւնը շատ հին է, նոյնիսկ առաքելական շրջանէն մըներացած նուիրական աւանդութիւն· ինք Փիլիպպոս առաքեալին կը վերագրէ զայն[16]· իրմէ առաջ այդ հնաւանդ սովորութեան պաշտպան կանգնած էին Գրիգոր Սարկաւագապետ, զոյգ Ներսէսները, Լամբրոնացի ու Շնորհալի, անոնցմէ առաջ՝ Պօղոս Տարօնեցի· նոյնը կը հաւաստէին Գրիգոր Նարեկացի եւ Խոսրով Անձեւացի: Հետեւաբար, եթէ երբեք նորամուտ բան մը կայ, ատիկա ո՛չ թէ ննջեցեալներու ի նպաստ պատարագ մատուցանելու սովորութիւնն է, այլ Փառէն Սրբազանի այդ վճիռն է, որուն բժբախտաբար զոհ է գացած նաեւ Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը:

(Շարունակելի)

Հ· ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

14· Հասկ, ԺԵ (1946, Թ· 9–10), էջ 249–251:
15· Հասկ, ԺԹ· (1950) էջ 4, 104, 144:
16· Յովհ· Արճիշեցի, Մեկն· անդ, էջ 15:

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻԻ ՏԱՂԵՐՈՒՆ

ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅ ՕՐԻՆԱԿԸ

Թերթ՝ 47: Ծաւալ՝ 6×7, 3 մատնաչափ: Նիւթ՝ եւրոպական ջրանիշեալ թուղթ: Գրութիւն՝ միասիւն, իւրաքանչիւր թերթի ներքին եւ արտաքին լուսանցքները բաժնող ուղղաձիգ կարմիր գծերու միջեւ: Գիր՝ սղագրեալ, շեղագրի մօտեցող վատ նոտրգիր: Տողք՝ 23: Մելան՝ սեւ: Որեւէ զարդարանք չունի: Հանգամանք՝ ինծի հասած անկատար, խոնաւութենէ թերթերը արատաւորուած: Վերակազմել տուի Ուիչիթա շաղանակագոյն անպարզ կաշեսախտակ կազմով, ներսէն մետաքս զորշ լաթով պատած: Ձեռագիրը ամբողջ է:

Պարունակութիւն·

Ա· պրակին առաջին թերթը կը սկսի «Քան զամենայն գործս չարից, հպարտութիւն»: Ամբողջ տողը սեւ մելանով գծաքաշ ջնջուած եւ տակը աւելի նուրբ գրով՝

«Վ(ա)ս(ն) հպ(ա)րտութե(ան) յառաքէլ Վ(ա)ըդ(ա)պ(ետ)ի առացե(ա)լ:»

Քան զամ(ենայն) գործս չարեաց,
Հպ(ա)րտութի(ւ)ն է զպրալի
Որ ա(ստուծո)յ է ատելի
Եւ իւր սրբոցն է թշնամի:

Հոս ներկայացուած իւրաքանչիւր երկտող՝ միայն մէկ տող է ձեռագրին մէջ, այս եւ յաջորդ տաղերուն մէջ:

Տաղս ունի 13 տուն, որուն վերջին տունը կ'աւարտի էջ 1բ·

Ո՞վ առ(ա)քել անմիտ ւ (հ)իմար
Թէ չէ եւ դու զիւ(ա)ց նման,
Զխոն(ա)րհութի(ւ)ն զու ի միտ առ,
Զըզիս ի հուրն որ կ(ա)յ միշտ վ(ա)ռ

Անդ կը յաջորդէ

«Տաղ զարիպ մարդոյ»:

Հոգ մի ասեր զարիպ
Թէ չէ իմ սիրտս կու արունի,
Զ(ա)ըիպն ի յօտ(ա)ը երկիր
Աւ(ա)ղ հայ դժու(ա)ը կու լինի:
Վեցուկէս տուն եւ կ'աւարտի նոյն էջին վրայ·

Սուրբքն բարեխօս լինին ն(ո)ր(ա),
Որ հ(ա)անի (ի)նք սրտի մուր(ա)տի,
Զաս(տո)ւանծն ողորմած ասեն եւն...:

Անդ կը յաջորդէ

«Տաղ անառակ որդւոյն»

Առ հայրդ աղաղակեմ,
Ան(ա)ռ(ա)կի որդոյս ողորմեա,
Հաց(ա)լից վարձկան(ա)ց,
Սեղանակից արժանի արայ:

Տասը տուն որ կ'աւարտի էջ 2ա·

Զմեղօք մեռե(ա)լ հոգիս
Կենդ(ա)ն(ա)ցոյց քեզ ի բն(ա)կութի(ւն),
Մեղ(ա)յ ա(է)ր իմ մեղ(ա)յ,
Մեղ(ա)յ ա(է)ր ինձ ողորմեայ:

Անդ կը սկսի

« Դաւիթ երիցու գործե(ա)լ չարիքն է »,

Դաւիթ երէց յըստ(ա)մպօլու
Տեղե(ա)ւ սուլու մ(ա)ն(ա)ստիրու,
Դու նուիրակդ յՈւռումէլու
Ս(ա)հմ(ա)նողին հէրն անիծ(ա)ծ:

22 տուն եւ կ'աւարտի էջ 3ա·

Ով չատչուեր էպսուզ,
Այս բ(ա)ւ(ա)կ(ա)ն լիցի յայժմոյս,
Իսկի չունիս առ ու նամուս,
Այլ աւելի զուրն անիծ(ա)ծ:

Տաղս Մարտիրոս Ղրիմեցու գրչէն է, եւ հրատարակած էի «Բազմավէպ»ի մէջ, 1929, էջ 284–285:

Էջ 3ա կը սկսի·

«Սոֆիայ ք(ա)ղ(ա)քի երիցոյ վերայ ասացեալ»:

© National Library of Armenia

Այս ալ հրատարակած եմ «Բազմավէպ»ի մէջ, 1929, էջ 285–6: Տաղը Ղրիմեցուն է:

Էջ 4ա կը սկսի. «Վառնայ ք(ա)ղ(ա)քի իրիցու վ(ե)ր(ա) ասացե(ա)լ բանք», որ նոյնպէս հրատարակած եմ «Բազմավէպ», 1930, էջ 264: Ղրիմեցուն է:

Էջ 5ա կը սկսի. «Յակոբ իրիցուն է, Էտրէնէցուն»:

Նախնի հարանց մեր ընտրելոց,
Պատուէր ունիմք հ(ա)ստ(ա)տ(ա)-
կ(ա)ն,
Վ(ա)տ(ա)ր(ա)խտից գրել պ(ա)բսաւ,
Եւ գեղեցկ(ա)ց տ(ա)լ գով(ա)ս(ա)ն:

38 տուներէ կը բաղկանայ Ղրիմեցիի այս տաղը, որ չհրատարակեցի այն առեն: Կ'աւարտի էջ 6բ. 38րդ տան սկիզբի երկու տողերով:

Գրչա ծնունդ բանս ասա(ա)նօր,
Արտայայտե(ա)լ ի չար եղ(ա)ն:

Ասոր անմիջապէս տակը գրէին «ամուսն(ա)ց(ա)ւ առ Տուփիայ», որ կրնայ յաջորդ տաղին խորագիրն ալ ըլլալ, թէեւ այդ տողին տակէն ամբողջ էջին լայնքին իրարու մօտ երկու գիծ քաշուած է:

Անդ կը սկսի.

Կինն անիծած Փիլիպոսի,
Պ(ա)տճ(ա)ռ եղեւ Յովաննէսի,
Հերովդէէ գլխ(ա)տեց(ա)ւ,
Ի ինքն չ(ա)ր(ա)չ(ա)ր ս(ա)տ(ա)կե-
ց(ա)ւ:

38 տուն կ'աւարտի էջ 8ա.

Ի քէն աղերսիւ հ(ա)յցեմ լ(ա)լկ(ա)ն,
Մ(ա)յր տե(ա)ռն յ(ի)ս(ուս)ի ծնընդ-
ե(ա)մբ վուս(ա)կ(ա)ն
Վ(ա)ս(ն) մեր մաղթեայ առ ծնեալդ քո,
Ողորմիլ գլթով յ(ա)ղիս հ(ա)յկ(ա)-
ղ(եա)ն:

Տաղիս հեղինակն է, 34րդ տան առաջին տողին համաձայն՝

Ես յովաննէս Երզնկացի,

որ անտարակոյս ո՛չ Պլուզն է եւ ո՛չ ալ Ծործորեցի կոչուած Յովհ. Երզնկացին: Այս Յովհաննէս Երզնկացին աւելի ուշ տաղասաց Երզնկացի մըն է, քահանայ, որուն մասին կը խօսիմ (իր տաղերէն նը-մոյշ մ'ալ տալով) իմ «Երիզայ եւ Եկեղեաց Գաւառ» գործիս Բ. հատորին մէջ:

Էջ 8ա կը սկսի. «Տաղ գինոյ եւ ուրախութե(ան)»:

Արեւելք յառաջին
Եւ յ(ա)րեւմուտք օր է վերջին,
Նստեալ հային դէմ փ(ա)ուչին,
Եւ գ(ա)ն(ա)գ(ա)ն լի խուչային:

21 տուն, եւ կ'աւարտի էջ 9ա.

Անկեղծ սիրելի,
Ոսկի քսակ լի,
Ի մէջ յ(ա)չխ(ա)րհի,
Փ(ո)րձիւք լիով լի:

Էջ 9ա կը սկսի. «Ի վերայ ստամպեօլ մեծի մ(ա)յր(ա)ք(ա)ղ(ա)քին ասացեալ է»:

Ինն հարիւր երկու թուին,
Դ(ա)ռն եւ ի վ(ա)տ ժ(ա)մ(ա)ն(ա)-
կին,
Տ(է)ր բարկացաւ յոյժ վերատին,
Ազգին Հռօմա յուն(ա)կ(ա)նին:

99 տուն լաւ ծանօթ, քանիցս հրատարակուած Աբրահամ Անկիւրացիի պատմական տաղն է ասիկա: Կ'աւարտի էջ 13բ:

Էջ 13բ կը սկսի. «Տաղ վ(ա)ս(ն) երկարնակ վ(ա)րդ(ա)պ(ե)տ(ա)ց արարմանցն աս(ա)ց(եա)լ է»:

Այն նղոված վ(ա)րդ(ա)պետնին,
Բաղում բաներ յարմ(ա)լեցին
Պէտիաթներ ս(ա)հմ(ա)նեցին,
Ամ(ենե)ց(ո)ւն զայս ուսուցին:
Զհեշտութի(ւն) քարոզեցին,
Զնեղութի(ւն) ի բաց բարձին,
Զօրէնս մեր թեթեւացուցին,
Զպ(ա)ս(ա)կերքն չ(ա)տ(ա)ցուցին:
Կանուխ ժ(ա)մ զալն վերցուցին,
Ծունր կրկնել մեղք աս(ա)ցին,
Զմատ(ա)ղն խափ(ա)նեցին,
Զաղք(ա)տ(ա)ց հ(ա)ցն կտրեցին:
Տանէ ի տուն ի շուրջ գային,
Ի յետ կ(ա)ն(ա)նցն կու նստէին,
Մարդ(ա)պետներ կու օրհնէին:
Ի վերնատունն նստէին,
Թէ կ(ա)ն(ա)յք խոստովանին,
Ասեն Հայոց ք(ա)հ(ա)ն(ա)յին,

Զէ պարտ երթան խոստովանին:
Եւ բարբանջմունք մի այլ արին,
Թէ կարգուած ք(ա)հ(ա)ն(ա)յին,
Յորժամ պ(ա)տ(ա)ր(ա)գ մ(ա)տուցանէ,
Զի իջանէր անդ ս(ուր)ը հոգին:
Տեսէք եղբ(ա)ր ամենեքին,
Եւ լսեցէք ս(ուր)ը կանոնքին,
Որիւ գրէ գկ(ա)րգ ք(ա)հ(ա)ն(ա)ին,
Եւ այլ անուն արեղային:
Այլ է սահման վարդապետին,
Որք ի ք(ա)ղ(ա)քունս չրջ(ա)գ(ա)-
յին,
Եպ(ի)սկ(ո)պ(ո)ս այլ կու ասին,
Կաթուղիկոս եւս ձայնին:
Մէջ աշխարհի եկեղեցին,
Պ(ա)րտ է լինել կ(ա)րգ ք(ա)հ(ա)-
ն(ա)ին,
Ի վանոր(ա)յս արեղ(ա)նին,
Կուս(ա)կրօն պ(ա)րտ է լինին:
Քարոզ(ա)տու վ(ա)րդ(ա)պետնին,
Ի մէջ կ(ա)ն(ա)նց պ(ա)րտ չէ չրջին,
Միայն ի խուց մի ք(ա)կին,
Եւ գինէմոլ մի լինիցին:
Եպ(ի)սկ(ո)պ(ո)սն ի յիւր թեմին,
Պ(ա)շտօն լինել իւրեան գործին,
Կ(ա)թուղիկոսն ի յ(ա)թոռին,
Գլուխ կ(ա)րգե(ա)լ ամեն(ա)յնին:
Երկն(ա)րն(ա)կ վ(ա)րդ(ա)պետնին,
Զկարգ օրին(ա)ց խ(ա)փ(ա)նեցին,
Քանզի ի մէջ տանց քն(ա)կին,
Եւ ընդ կ(ա)ն(ա)յս գինէմոլին:
Եւ զաղջկունսն ընտրէին,
Զ(ա)ղվորն եւ գէրն գ(ա)տէին,
Զխորոտիկ եւ զվոքրիկ,
Որ զաջ գ(ա)հ(ա)կ ոչ գիտէին:
Որ զաջ գ(ա)հ(ա)կ ոչ գիտէին՝
Իւրե(ա)նց բ(ա)ժին գ(ա)յն հ(ա)-
նէին,

Եւ մ(ա)ր(ա)պետ անուանէին,
Յոր տուն գնան ի յետ տանին:
Գինի լնեն իւրեանք խմին:
Յորժ(ա)մ խմեն եւ շատ զեխին,
Դեղիք խնդրեն եւ քուն լինին,
Նստին քովն մ(ա)ր(ա)պետին,
Ի ձեռն առե(ա)լ զոտքն չփին:
Երբ ի յոմանց որ հ(ա)ցեն,
Թէ զինչ կ(ա)նէ հոտ առ(ա)նձին,
Պատ(ա)սխ(ա)նի տայ այլ լկտին,
Կու շուփեմ զոտք ք(ա)հ(ա)ն(ա)յին:

Դատելով ոճէն՝ տաղը Ղրիմեցիինը պ'երեւի ինծի: Ընտիր տաղ մըն է, ժամանակուան կրօնաւորներու վատ եւ թոյլ բարքերուն վրայ:

Էջ 14ա կը սկսի. «Վ(ա)ս(ն) ապ(ա)հութե(ան) ասացեալ բանք»:

Սողոմոն մայրն խմատուութե(ան),
Առ մեզ խօսի բան խր(ա)տ(ա)կ(ա)ն,
Որ թէ յ(ա)ւելու ի մեծութե(ան),
Նա ցաւք յանձինն բազմ(ա)ն(ա)ն:

Կ'աւարտի էջ 16ա, ունի 39 տուն: 35րդ տան առաջին տողը ունի «Գերի ն(ա)ղ(ա)չ ողորմելի», որով տաղը Մկրտիչ Նաղաշինն է: Կ'աւարտի՝

Ես ան(ա)ժ(ա)ն մեղօք անբ(ա)ն,
Զեմ ք(ա)րտուղ(ա)ր ատուգ(ա)բ(ա)ն,
Զձեզ աղ(ա)չ(է)մ գ(ա)մ(է)ն(է)սեան,
Արժան արէք գիս թ(ո)ղ(ո)ւթե(ան):

Էջ 16ա կը սկսի.

«Խոովար(ա)ր անձ(ա)նց պար
ս(ա)ւ(ա)նք եւ նախա
տինք»

Անձն իմ վայ քեզ հազար բեր(ա)ն,
Թէ խոով կեն(ա)ս կ(ա)մ ոխ պ(ա)հես,
Զի խոովարարն է ս(ա)տ(ա)ն(ա)յ,
Զ(ա)ն(ա)յ որ զսէրն հ(ա)ստ(ա)տես:

19 տուն, որուն 17րդ տան առաջին տողը ունի «Նաղաչ հազար վայ քո հոգւոյդ», իսկ վերջին տունը ունի՝

Յայնժ(ա)մ լինիս դու քրիստոնէ(ա)յ,
Յորժ(ա)մ խոցեն նա համբերես,
Եւ Քրիստոսի սիրոյն հ(ա)մ(ա)ր,
Զչարկամիտ ոտն հ(ա)մբուրես:

Կ'աւարտի էջ 16բ, ուր կը սկսի «Տաղ անցաւոր աշխ(ա)րհի, ասացե(ա)լ»:

Երազ է ու սուտ եղբ(ա)րք,
Աշխ(ա)րհիս բ(ա)ներն լման,
Ուր են թ(ա)գ(ա)ւորք իշխ(ա)նք,
Պ(ա)րոն(ա)յք ու սուլթան ու խ(ա)ն:

Կ'աւարտի էջ 17ա, եւ ունի 14 տուն, որուն 13րդ տան առաջին տողը ունի «Այ

© National Library of Armenia

ողորմելի Նաղաշ» եւ նախորդին պէս՝ աս
ալ Մկրտիչ Նաղաշի գրչէն է։

Գիտէիր թէ լողվորդ էիր
Ի հոգ աշխ(ա)րհիս գ(ա)տիս,
Շահ չունիս քան զենն աւելի։
Նա մեզաց գեան կա(ա)նի,

Էջ 17բ կը սկսի. «Տաղ ն(ա)գ(ա)չ վ(ա)ըգ(ա)պ(ե)տի աս(ա)ցեալ», կ'աւարտի նոյն էջին առորոտը եւ ունի 9 տուն։ Առաջին տունը՝

Է՞ր չես մտ(ա)ծեր ի միտքդ ի վայր,
Այ անխմաստ մ(ա)ըդ գու տխմ(ա)ր,
Է՞ր կորուսիր գ(ա)գք(ա)տ հոգիդ,
Յայդ անց(ա)ւոր մ(ա)ըմնոյդ հ(ա)մ(ա)ր։

Վերջին տունը՝

Պագ եւ յ(ա)զօթք խիստ կու կեն(ա)յ,
Ըստ որ հրեշտ(ա)կ(ա)ց էր պ(ա)ր(ա)պ(ա)ր,
Տէրն տ(ա)ցէ գպ(ա)ըգեւքն ձեզ,
Զինչ որ էառ աղք(ա)տ գ(ա)գ(ա)ր։

Էջ 18ա կը սկսի. «Տաղ Առաքել վ(ա)ըգ(ա)պ(ե)տի ասացեալ վ(ա)ս(ն) սեղանի եւ գինոյ ուրախութե(ան)»։

Այժմ օրհնեցուք մեք մի(ա)բ(ա)ն,
Հայր եւ զՈրդի եւ գ(ուր)բ հոգին,
Որ ս(ր)բութե(ան)ց ես պ(ա)ըգեւիչ,
Զոր վ(ա)յելեն աղդ մ(ա)ըդկ(ա)յին։

Ունի 19 տուն։ Տուներու առաջին գլխատառերը կը կազմեն ԱՅՍ ԱՌԱՔԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ, եւ կ'աւարտի էջ 18բ, սա տունով.

Ի մի(ա)սին գ(ա)ստու(ա)ծ օրհնեմք,
Զհ(ա)յր եւ որդին եւ գ(ուր)բ հոգին,
Անլռելի ձ(ա)յնիւ երգով,
Փ(ա)ռ(ա)բ(ա)նեմք երբե(ա)կ անձին։

Էջ 18բ կը սկսի. «Օրհնութե(ան) տանց եւ սեղանի գեղեցիկ»։

Ա(ստուա)ծ անեղ եւ անսկիզբ,
Անպ(ա)(բա)դեր եւ անվ(ա)խճ(ա)ն,
Հայր եւ որդի եւ ս(ուր)բ հոգի,
Երրորդութի(ւն) մի(ա)ս(ա)կ(ա)ն։

Ունի 22 տուն եւ կ'աւարտի էջ 19բ.

Բ(ա)րեխօսե(ա)յ քոյ մի(ա)ծնին,
Յորժամ փ(ա)ռօք գայ հ(ա)յր(ա)կ(ա)ն,
Ի մեղաւոր ծ(ա)ռ(ա)յս գթ(ա)յ,
Արժան առնել արք(ա)յութե(ան)։

Իսկ 16րդ տան առաջին տողը ունի «Գերի ն(ա)գ(ա)չ ողորմելի», որով տաղս Մկրտիչ Նաղաշինն է։

Էջ 19բ կը սկսի. «Տաղ ուրախութեան եւ գինոյ»։

Այսօր խմենք զանուշ գինին,
Օրհնեմք զտ(է)րն ամենա(ա)յնին,
Զինչ որ կեր(ա)ք ձեր սեղ(ա)նին,
Մէկին հ(ա)գ(ա)ր պ(ա)ըգեւեսցին։

Ունի 5 տուն եւ կ'աւարտի էջ 20ա.

Ո(ր)պ(էս) օրհնե(ա)ց գ(ա)բր(ա)հ(ա)մ,
Զիս(ա)հ(ա)կն եւ գս(ա)ռ(ա)յն,
Այն օրհնութ(ենէ)ն ի ձեր վեր(ա)ն,
Մինչ ի գ(ա)լուստն միւս անգ(ա)մ։

Էջ 20 կը սկսի «Տաղ սիրոյ եւ խոն(ա)ր-հութե(ան) մ(ար)դկ(ա)ն ազ(ա)նց»։

Խրատ մի տամ քեզ սիրով,
Թէ միտ առնուս եւ պ(ա)հես,
Սիրել զընկերն ասեմ քեզ,
Որ զքեզ առնէ պարզ երես։

Ունի 26 տուն, կ'աւարտի էջ 21ա.

Թէ հանց որ բ(ա)րկ(ա)ցող ես,
Յիշոցն(ա)տու եւ պիղծ ես,
Ազահ կ(ա)մ արբեցող ես,
Արք(ա)յութե(նէ) զրկե(ա)լ ես։

Էջ 21ա կը սկսի. «Վ(ա)ս(ն) պ(ա)լոյ Փռանկ ազգին աշխարհ ամենայն»։

Քանզի Փռ(ա)նկ(ա)ց ազգն չարժին,
Կ(ա)մօքն անմ(ա)հ թ(ա)գ(ա)ւորին,
Զոր եւ յ(ա)ռ(ա)ջ զայս աս(ա)ցին,
Ս(ուր)բ հ(ա)յր(ա)պետքն Ա(ստուա)ծային։

Ունի 41 տուն եւ կ'աւարտի էջ 23ա.

Զի չեմ յիշմ(ա)ն ես արժ(ա)նի,
Ի իշ(ա)ա(ա)կել ի հանդիսի,
Աղ(ա)գ(ա)կեմ ողորմելի,
Ինչ ընդ ձեզ մասն լիցի։

Իսկ 27րդ տան առաջին տողը «Ես առ(ա)քել մեղօք ի լի»։ Տաղս Առաքել Բ-ղիշեցի կամ Պոռեցի տաղասացինն է։

Էջ 23ա. «Տաղ ի վ(է)ր(ա) Վարդի եւ պիւլպիւլի աս(ա)ցե(ա)լ»։

Յորժամ զարուն եղեւ եկ պիւլպիւլն այ-դին,
Տեսե(ա)լ զթուի վ(ա)ըդին ուն(ա)յն ի նմին,
Տրամեցաւ դ(ա)ռն(ա)դին արտ(ա)ս-ուէր յոյժդին,
Զի ոչ եդիտ անդէն զիւր սիրելին։

Ունի 22 տուն. կ'աւարտի էջ 24բ.

Այսօր ինձ խնդում չ(ա)տլուխ կ(ա)-նեմ,
Որ դուն ես մօտ ի յիս եւ զքեզ տեսնեմ,
Ապա թէ հեռանայս յ(ա)նկից կվ(ա)-խեմ,
Որ դամ զքեզ որոնեմ եւ ոչ գտ(ա)նեմ։

Էջ 24ա կը սկսի. « Տաղ վ(ա)ըդի եւ պիւլպիւլի»։

Երբ սիրոյն վարդն վերթի,
Մտիկ արէք այն պիւլպիւլին,
Զտերեւն գ(ա)րկեր յիւր վեր(ա)ն,
Զօրն կեն(ա)յ ի վ(է)ր(ա) վ(ա)ըդին։

Ունի 15 եւ կէս տուն։ Կ'աւարտի էջ 24բ.

Թորոսն գովեց զվ(ա)ըդն եւ պիւլպիւ-լին,
Որ ի սիրոյ դամ կու ք(ա)չեն,
Զինչ հոգ(ա)ծին կ(ա)յր ար(ա)բածս,
Որ չէ դիպեր այսմ պէտքին։
Ա(ստուա)ծ վերկէ այն փորձութե(ան)ց,
Եւ պ(ա)ըգեւէ գ(ա)ն(ա)նց բ(ա)ըին։

Էջ 24բ կը սկսի. «Տաղ Յովն(ա)նու մ(ա)ըգ(ա)ըէին»։

Յովնան ք(ա)ըոգն նինուէին,
Որ օրին(ա)կ էր ք(ըիստո)սին,
Ո(ր)պ(էս) յուն(ա)ն ի փոր վկտին,
Տ(է)ր մեր յ(իսու)ս ի տ(ա)պանին։

Ունի 29 տուն եւ կ'աւարտի էջ 26ա.

Փառք ա(ստուծո)յ հօրն վերին,
Ի որդոյ անճ(ա)ռ ծննդե(ա)ն նորին,
Հոգւոյն ս(ր)բոյ չնորհ(ա)բ(ա)շխին,
Յ(ա)նցե(ա)լ այժմոյս ւ ապ(ա)գային։

Իսկ 28 տան երկրորդ տողը ունի «Ես առաքել երգող սորին»։

Էջ 26ա. «Տաղ ան(ա)ռ(ա)կի վ(է)ր(ա) աս(ա)ցե(ա)լ»։

Մեղ(ա)յ քեզ ք(ըիստո)ս ա(ստուա)ծ,
Ապ(ա)ւէն յոյս զքեզ ունիմ,
Լալ(ա)գին պ(ա)ղ(ա)տ(ա)նօք,
Հ(ա)ռ(ա)չմ(ա)մբ առ քեզ անկանիմ։

Ունի 14 տուն եւ կ'աւարտի էջ 26բ.

Ընդ երիս մ(ա)քուր ս(ուր)բ ժողովոյն,
Զխ(ա)չե(ա)լն ա(ստուա)ծ խոստովա-նիմ,
Ճար չունիմ ճ(ա)ր(ա)կ չունիմ,
Իմ արդ(ա)ր(ա)ն(ա)լոյ ճ(ա)րն դուն ես։

Էջ 26. «Տաղ սողոմոնի իմ(ա)ստնոյ»։

Աստընւորս ո՞վ չինե(ա)ց իւր տուն,
Կ(ա)մ հ(ա)նգե(ա)ւ սրտովն ի վերայ,
Կամ ո՞վ եդ քար ի քարի վերայ,
Թէ յաւիտե(ա)ն երթայ մընայ։

Ունի 8 տուն, կ'աւարտի էջ 27ա.

Փառք ա(ստուծո)յ հօրըն վերին,
Որդւոյ անճառ ծննդեամբ նորին,
Հոգւոյն Ս(ր)բ(ո)յ չնորհաբաշխին,
Յանցե(ա)լ յայժմոյս ժամանակին։ Ամէն։

Էջ 27ա. «Զիլէցի երիցու հաւու գովասանք»։ Տպագրած եմ Բազմավէպ, 1930, էջ 265։ Կ'աւարտի էջ 28ա։ Անդ Դ(ա)ր-ձ(եա)լ ն(ո)յն հ(ա)ւի տ(ա)ճկերէն»։ «Սիլիս(տ)ր(ա)ցի յակոբ երիցուն է Տասը տուն եւ կ'աւարտի էջ 28բ։

Էջ 28բ. «Սիլիս(տ)ր(ա)ցի յակոբ երիցուն է պ(ա)րս(ա)ւ(ա)նք»։ Կ'աւարտի էջ 29բ։ Հրատարակած եմ Բազմավէպ, 1930, էջ 114–115։ Էջ 30ա. «Բանք ծաղրածուք գրե(ա)լ ի մ(ա)րտիր(ո)ս վ(ա)ըդ(ապե)-տէ առ բարեկամս իւր»։

Ո՞վ սիրելիք պ(ա)րոն խոճայք,
Մեր ճարն ի ձեզ մն(ա)ց եղբ(ա)ըք,
Էանց գարնան լաւ ժ(ա)մ(ա)ն(ա)կ,
Ահայ ամռան կէսն հասանք։

Ունի 16 տուն եւ կ'աւարի էջ30ա.

Այս բ(ա)ներուս մի տրտնջէք,

© National Library of Armenia

Տէրթլու սօյլէր լաւ կու դիտէք,
Երբ որ այդչափ զմեզ մոռ(ա)ցէք,
Զ(ա)զուհացն հ(ա)լ(ա)լ արէք:
Մարտիրոս Ղրիմեցիի հեղինակութիւնն է:

Էջ 30ա. «Ի վերայ պապատ(ա)զու ա-
ս(ա)ցե(ա)լ տաճիկ բառով մ(ա)բտիրոս
վ(ա)ըդ(ա)պ(ե)տի»: Տաղս Ղրիմեցիին է,
ունի 26 տուն եւ կ'աւարտի էջ 31բ: Իսկ
էջ 32ա. առանց խորագրի կը սկսի.
«Վառնա համամն(ա)յ» սկիզբով տաճկե-
բէն տաղը նոյն Մարտիրոս Ղրիմեցիի 13
տուն եւ կ'աւարտի էջ 32բ: «Տաղ յովա-
նէսին, եւ զատու զատեր անշային ասա-
ցեալ»:

Այս ինչ կրակ որ գիս այրե(ա)ց,
Այս ինչ (խ(ա)ւար որ գիս պատե(ա)ց:
Ես վէմ անխախտ էյի խախտեց,
Պօղպատ ամուր զերդ ջուլ հալեց:
Ունի 15 ու կէս տուն, կ'աւարտի էջ 33ա.
Մայր իմ ծնօղ ես քեզ ծ(ա)ռ(ա)յ,
Յ(ա)նկ(ա)րծ պ(ա)տ(ա)հե(ա)ց վաղե-
ցայ:
(Սխալաչատ, ինչպէս ջուր-ի տեղ ջուլ,
կամ վախեցայ-ի տեղ վաղեցայ):

Էջ 33բ. «Տաղ ննջեցելոյ բերանոյ ասա-
ցե(ա)լ ումեմնէ»:

Յերեկ յօղվեր(ա)ցն անցայ,
Հոտ առի զբիմս կ(ա)փուցի,
Քայլ մի երկու յ(ա)ռ(ա)ջ ղն(ա)ցի,
Նեղ ու խոր գնտան մի տեսի:
Ունի 20 տուն: Կ'աւարտի էջ 34ա.
Յոյս Ա(ստուա)ծածին ունիմք,
Բարեխօսէ նա վ(ա)ս(ն) մեզի,
Որ զմիածին որդին աղաչէ,
Որ աղատէ զմեզ հրոյն գեհենի:

Էջ 34ա. «Տաղ ի վ(է)ր(ա) ծովու ասա-
ցեալ»:

Սատիկ հ(ո)զմ(ո)յ հ(ա)նդիպեց(ա)յ,
Յերբոր ընչե(ա)ց ս(ա)ս(ա)նեց(ա)յ,
Ս(ա)կ(ա)ւ մի լուր եւ հ(ա)մբերե(ա)յ:
Վեց եւ կէս տուն: Կ'աւարտի էջ 34բ.
Կու վախեմ թէ քարին դիպի,
Կորով մեռանիմ ես ծով:
Վեցերորդ տան վերջին տողը ունի «Կեսա-
բացիս ի մէջ նաւի»: Էջ 34բ. «Տաղ Ռ.ՃԺԳ.
(1724) թվին ս(ուր)բ Է(րուսաղէ)մ(ա)յ
ուխտաւորքն ի մէջ ծովին ընկղմե(ա)լ
նաւին»: Տաղը չահեկան ըլլալուն, ամբող-
ջութեամբ կը հրատարակեմ հոս:

Ի մէջ նաւի դժնե(ա)յ անձին,
Դ(ա)մ(ա)սկ(ա)ց(ո)յ ռամատանին:
Մտե(ա)լ ի նաւ հայոց ազգին,
Եւ միաբան յոյնք ընդ նոսին:
Պատահեցաւ ն(ո)ց(ա) յայս բան,
Աղետալի եւ կսկծական:
Ի խորս ծովու անդնդակ(ա)ն,
Ողորմագին եւ լալական:
Բամե(ա)լ ուխտաւոր(ա)ց սեռին,
Սիրով սրտիւք խսկ ճեմէին:
Ի ս(ուր)ք յերկիրն պաղեստին,
Առ տեսանել զյանկալին:
Որակ որակ խոցոտեցան,
Սիրտս ամենայն միաբան:
Յ(ո)րժ(ա)մ տեսին զծ(ո)վ(ո)ւ տաղ-
լան,
Ահարեկե(ա)լ սասանեցան:
Խաւարեցե(ա)լ մութն հանդիպ(ա)ւ,
Շնչել հողմոյն որ ի հարաւ:
Սիւնն ի նաւին յոյժգին քեկաւ,
Եւ առ(ա)գաստն պ(ա)տ(ա)ռեց(ա)ւ:
Ուխտաւորաց չորս հարիւրին,
Սրտակոտոր եղեն անձին:
Լացն աղաղակ եղուկ բարձին,
Առ բարձրելոյ հօր էակցին:
Բաղահաւատ քամին հնչե(ա)ց,
Ջտիւ եւ զդիշեր ոչ դադարե(ա)ց:
Կուսից հարսից ւ ամէն կանանց,
Լացն արտասուքն ծորե(ա)լ աչաց:
Ուրբաթ աւուր մէջ դիշերին,
Ի դէմ լ(ո)ւսոյ առաւօտին:
Մառախուղ մէգն պ(ա)տե(ա)ց նա-
ւին,
Այլ ճար ոչ գոյր զերծիլ անձին:
Նաւն ի հողմանց տապալեց(ա)ւ,
Եւ ջրասոյզ ընկղմեցաւ:
Հինգ վեց հարիւր հոգիք մեռան,
Քրիստոնէիւք ւ այլ ազգաւ:
Եղեւ այս մեր Թուականին,
Զինչ է ճայնե(ա)լ ն(ա)հ(ա)նջ ամին:
Նոյեմբերի ամսոյ քսանին,
Ղարա պուրուն մերձ ալային:

Էջ 35ա. «Գովասանք եւ տաղ ս(ուր)ք
ա(ստուա)ծածնի»:

Աղրիւր կենդանի, բղխում զ(ա)ն(ա)-
զ(ա)ն,
Մեղայ քեզ մեղ(ա)յ, կոյս ա(ստուա)-
ծածին:
Գլուխ կ(ո)ւս(ա)ն(ա)ց, դու թագ ու
պ(ա)րծ(ա)նք,
Մեղ(ա)յ քեզ մեղ(ա)յ, կոյս ա(ստ-
ուա)ծածին:
Ունի 8 եւ կէս տուն. կ'աւարտի էջ 35բ.
պակասաւոր
Զքեզ մուշկ կու գովեն, ...

Էջ 35բ. «Աւետիս տաճկաբար լեզուն է»:
Ասկէ կու տամ առաջին տողը.
Քիմսէ պէնի պիլմէզ խոի աւ(ետիս):
Ունի 30 տող եւ կ'աւարտի
Կելտիմ քի էյան էյլէմ, աւ(ետիս):

Էջ 36ա. «Աւետիս ծննդեանն քրիստոսի,
ա(ստուծո)յ մերոյ»:

Այսօր տօն է ծննդեան աւ(ետիս),
32 տող, տող մը հայերէն՝ տող մը թուր-
քերէն. կ'աւարտի՝
Մուժտէ սիզէ ով գարտ(ա)ղար, աւ(ե-
տիս):

Էջ36ա. «Աւետիս ծննդե(ա)ն ք(րիստո-
ս)ի ա(ստուծո)յ մերոյ»:

Ցնծ(ա)ցէք ուրախացէք, աւ(ետիս):
Ունի 106 տող: Կ'աւարտի էջ 37բ.
Եւ պարգեւէ զանճառ բարի. աւ(ետիս):

Էջ 37բ. «Աւետիս ծննդեան ք(րիստոս)ի
ա(ստուծո)յ մերոյ»:

Այսօր ծնաւ արքայն երկնից, աւ(ետիս):
Ունի 68 տող: Կ'աւարտի էջ 38ա.
Եւ զձեզ օրհնեմք որ դուրանայք, աւ(ե-
տիս):

Էջ 38ա. «Աւետիս ծննդեան»:
Խաթուն մարիկ արեկ ի վեր, աւ(ե-
տիս): Ունի 68 տող: Կ'աւարտի էջ 38բ.
Հասնիք օրերս այս պ(ա)տուական, ա-
ւ(ետիս):

Ասկէ վերջ կրնայ թերթ մը ինկած ըլլալ,
քանի որ ներկայ էջ 39ա. կը սկսի
«Եւ ըստացօղ բէլա պղծին»:

Էջ 39ա յաջորդ տաղը կրկնութիւնն է էջ
33բ-ի» «Տաղ ննջեցելոյ բերանոյ ասացեալ
ումեմնէ» խորագրով տաղին, եւ նոյնպէս
ունի 20 տուն, նոյն սկիզբով եւ վերջաւո-
րութեամբ:

Էջ 40ա. « Տաղ զ(ա)տ(ա)ստ(ա)նի
տաճկաբար»:

Այէթի ինճիլտէ մահշերտէ տուրան:
Ունի 7 տուն եւ վերջին տողն է՝
Սանա թ(ա)զիր էզ(ա)մ խտէր նէտիր
չու:

Էջ 40ա. կէսէն վար պարապ, նոյնպէս
յաջորդ էջը: Էջ 41ա. տարբեր գրով,
նոտրգիր: Գլուխը մասնաբաժանեալ բոլո-
րակ մը՝ ազատ ձեռքով անկանոն գծուած:
Կը սկսի «Զմուտ բոլորակիս, այսպէս...»:
Կ'աւարտի էջ 44ա. էջի կէսին «... թէ,
Գ. (39, մնայ կարճ գայ, Եւ ք(րիստո)սի,
փառք յ(ա)ւ(ի)տ(եա)նս, ամէն»: Մնա-
ցեալ էջերը՝ պարապ:

Գրիչ, գրչութեան տեղ, եւ թուական կը
պակսի ձեռագրիս մէջ: Տարակոյս չկայ
որ գրուած է Ռ.ՃԺԳ (1724) թուականէն
վերջ, քանի որ այդ թուականին գրուած
է էջ 34բ – 35ա տաղը, Երուսաղէմ գացող
ուխտաւորական նաւի մը ընկղման մա-
սին: Էջ 35ա լուսանցքին վրայ, գրիչ մը՝
ընկղմած նաւուն թուականը հաշուած է
եւ իր թուականէն որքան առաջ եղած ըլ-
լալը նշանակած: Իր թուականը նշանակած
է 1266 (1817), թէեւ սխալմամբ ընկղման
թուականը նշանակած է 1126 փոխանակ
1123-ի, որով իր թուականին հետ ունեցած
տարբերութիւնը նշանակած է 140 տարի,
փոխանակ 143 տարի նշանակելու: Ուրեմն
ձեռագրին գրչութեան թուականը այս
տուեալներով կ'ինկնայ 1724 եւ 1817 թուա-
կաններուն միջեւ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-ում